

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՔԱՋՈՒՆԻ *)

(† 1 դեկտ. 1903)

Ծնած է ի Պոլիս 1823 օգոստոս 11/23ին և քսանամեայ՝ քահանայական օծումն ընդունած. իբրև ուսուցիչ ի վանս և ի Ռափայելեան վարժարանի գործելէ վերջ, երկար ատեն Պոլիս կեցաւ Կէօլէեան և Տիւզեան գերդաստաններու մէջ իբրև դաստիարակ և դրան երէց ու միանգամայն Բերայի և Քաղկեդոնի վարժարաններուն տեսչութիւնը կատարելով. 1873ին նոյն տեղի մեծաւոր անուանուեցաւ և հրդեհէն վերջ, 1875ին, վերստին շինեց Բերայի վարժարանը, Հանգուցեալը իբրև միաբանութեանս գործակալ աշխատած է նաև ի Պոլիս և ի վանս. ամենամեծ ձիրքը՝ դժուար և ծանր պարագայներու մէջ յայտնած է իր հաւատարմութեամբ, խոհանակութեամբ ու աննկուն աւրիութեամբ:

Վաթնամեայ՝ ստանձնեց Մուրատեան վարժարանի ընդհանուր գործակալութիւնը. օրհնեց երկինք իր անխոնջ ջանքը, և հեղեղի ու հրդեհի լափող ու քանդող կոտորածները արգելք չեղան որ երկիրը արգասաւոր պտղաբերէ այդ համակամ և ձախորդութեանց մէջ անվրդով մշակին:

Քաջունին փորձով գործել տուածը՝ գրչով ալ գրքերու մէջ կ'աւանդէր. իր գրութիւնք անով աւելի յարգ ունին որ գործնականով հաւատարմած են. նա Երկրագործութեամբ (տպ. 1899) ընդհանուր սկզբունք մը տալէ վերջ, մանրամասնութեանց կ'իջնէ Պարտիզպանութեան (տպ. 1899) և Պտղաբանութեան (տպ. 1899) հատորներով. և կը սորվեցնէ հայ գիւղացւոյն Շերամաբանութեամբ (տպ. 1895), Մեղրասրտութեամբ (տպ. 1895) և Կաթնաբանութեամբ (տպ. 1901), միայն հողէն չսպասել իր հացը, այլ և միջատաց և անդէոց խնամով՝ գիտնալ իր կեանքը պահպանել: Սակայն ժողովուրդը

*) Քաղում ենք «Բաղմալէպից»:

միայն մշակ դասակարգով չկազմուիր, Հ. Քաջունիին պէտք էր Արուեստաբանութիւն (Ա. տպ. 1875: Բ. տպ. 1897) մ'ալ գրել արուեստաւորաց ու արուեստասիրաց խումբին համար, մերձեցնելով իրենց Եւրոպայի լոյսը ու գիւտերը, որ մեծ ընդունելութիւն գտաւ: Իսկ մեր վարժարաններու համար դասագրքեր պատրաստել իր առաջին փոյթը և զբաղանքը եղաւ. նա իր երիտասարդ հասակին դասախօսութեան նուիրուելով պէտքը զգաց բնական գիտութեանց հիմը դնել Համարողութեամբ (Ա. տպ. 1854: Բ. տպ. 1859) մը, որ հնութեամբն հանդերձ ընտրելագոյններէն է դասագրոց մէջ. իր երկհատոր Բնաբանութիւնը (տպ. 1871) և Տարրաբանութիւնը (տպ. 1870) ու Մեքենականութիւնը (տպ. 1872) դեռ ամենէն ընդարձակ ու մանրամասն գրութիւնները միացած են մինև ցարդ ազգիս մէջ: Քաջունիին իր մասնաճիւղէն դուրս՝ ունի ուրիշ երկու գրութիւններ՝ Աշխարհագրութիւն հին եւ նոր Հայաստանի (տպ. 1857) և Հնախօսութիւն Հայաստանի (տպ. 1853), որոնք ժամանակին իրենց օգուտը և գործածութիւնը ունեցած են. և Թարգմանութիւն մը Պլանշարի Դպրոց բարոց (տպ. 1860) գրքին:

Յիշեալ գրքերուն մէջ պիտի չփնդուենք Քաջունիի գլուխ գործոցը և ամենէն ծանր աշխատութիւնը որ իրմէ 40 տարի գողցած է. արդէն ծանօթ է իրեն հոյակապ վաստակը՝ երկհատոր Բառգիրքը արուեստից և գիտութեանց (տպ. 1891—93), անստուերանալի երկասիրութիւն մը. հոս Քաջունիին միայն անխոնջ միտք մը և յարատե կամք մը չերևար, այլ աւելի բան մը. բառերու ընտրութիւնը, հմուտ դասաւորութիւնը և ուրիշ շարք մը յատկութիւններ կը յայտնեն իր մեծ տաղանդը: Իր արդիւնքով մեր մէջ մտան կարգ մը ուսումնական բառեր զորս գործածած է իր դասագրոց և բառգրքին մէջ. նա վրէժխնդիր էր անոնց գործածութեան և ընտրելագոյն մը գտած. ատեն հազիւ կը փոխանակէր: Մեծ զարկ մը տուաւ բնական գիտութեանց զարգացման Ուխտիս և հետեւաբար մեր վարժարաններու մէջ. իր յատուկ փափաքով և հսկողութեամբ կանգնեց կղզեկիս մէջ ընդարձակ դահլիճ մը ուր դասաւորուած են ամենազգի թոջնոց և զեռնոց հարուստ հաւաքածոյ մը:

Միաբանութիւնը կը ճանչնար կրօնաւորութեամբ ու գիտութեամբ այսպիսի պատկառելի անձի մը յարգը, որուն բացի մեծ ու փափուկ պաշտօններու յանձնարարութենէն, զորս միշտ խղճիւ ու յաջողութեամբ կատարած է, պատւած ու մեծարած է զինքը արտաքին ցոյցերով ու հանդէսներով: 1893-ին քահանայութեան յիսնամեկին՝ միաբանութեանս հետ տօնեցին ազ-

գայինք և օտարազգիք այդ արդիւնաւոր մեծ անձին գործունէութիւնը: 1897-ին իտալական պետութիւնը ասպետական շքանշանով զարդարեց գիտուն հօր կուրծքը: Իսկ 1903-ի մայիսի ընդհանուր ժողովոյ գումարման մէջ, միաբանութիւնս ալեգարդ հօր անթիւ և մեծամեծ արդեանց վարձատրութիւն մը ուղելով ընել, ընտրեց ու անուանեց զինքը Թագադիր Արքա . և տալով իրեն ընդհանուր դառաւական մեծաւորի պաշտօն, զայն Կ.Պոլսիս յղեց, ակնկալելով մեծամեծ ձեռնարկներ: Հանգուցեալը հոն երիտասարդական եռանդով սկսաւ գործել, բայց չոր հազ մը և ութսուն տարիներ կը ծանրանային իր վրայ:

Յանկարծական թոքատապ մը՝ հազով և շնչարգելութեամբ, չորս օրուան մէջ կը յափշտակէ մեղմէ մեր սիրելի և բազմարդիւն հայրը, որ դեկտեմբերի 1-ին առաւօտուն կ'աւանդէ հոգին, կազդուրուելով Եկեղեցւոյ սուրբ խորհուրդներով, բազմած իր թիկնաթոռին վրայ: